



ՄԱԿ-ի ԼՐԱՏՈՒՄ

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ

№5



ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՄԱԿ-ի Մշտական համակարգող 2
- ՄԱԿ-ի Չարգացման ծրագիր (UNDP) 2
- ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (UNFPA) 5
- ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատար (UNHCR) 6
- ՄԱԿ-ի Կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպություն (UNESCO) 8
- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (UNICEF) 10
- Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO) 12
- Համաշխարհային պարենի ծրագիր (WFP) 13
- ՄԱԿ-ի Հասարակական տեղեկատվության բաժին (DPI) 14
- Միգրացիայի միջազգային կազմակերպություն (IOM) 14



ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ

28-31 Օգոստ. 2000	ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակ, Նյու Յորք	«Կրոնական ու հոգևոր առաջնորդների համաշխարհային խաղաղությանը նվիրված զագաթաժողով»
28-30 Օգոստ. 2000	ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակ, Նյու Յորք	ՄԱԿ-ի ՀՏԲ/ՀԿ Ֆորում. «Գլոբալ համեմաշխուքում: Դեպի հատառույթներ և միջազգային համագործակցության ուղին»
30 Օգոստ. - 1 Սեպտ. 2000	ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակ, Նյու Յորք	Ազգային խորհրդարանների նախագահող պաշտոնյաների համաժողով (www.ipu.org)
5 Սեպտ. 2000	ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակ, Նյու Յորք	ՄԱԿ-ի Հազարամյակի բացումը
6-8 Սեպտ. 2000	ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակ, Նյու Յորք	Հագաթմանի զագաթաժողով

Ամբողջական տեղեկատվությունը տես URL: <http://www.un.org/millennium>

ՀՏԲ-ՀԿ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Ս/թ օգոստոսի 28-ին ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակում գումարվեց ՀՏԲ-ՀԿ սեկտորի ամենամյա 53-րդ կոնֆերանսը «Գլոբալ համախմբվածությունը՝ խաղաղության եւ միջազգային համագործակցության ուղի» խորագրով:

Այս տարվա համաժողովը, ասպարեզ տալով ՀԿ ներկայացուցիչներին, ՄԱԿ-ի համակարգին ու կառավարություններին, խնդիր ուներ քաղաքացիական հասարակության, կազմակերպության եւ անդամ պետությունների համատեղ աշխատանքի ուղիներ փնտրել՝ իրագործելու այն գործողությունների ծրագրերը, որոնք հավանություն էին ստացել 90-կանների համաշխարհային խոշոր համաժողովների ընթացքում:

ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը ուղերձով դիմեց ավելի քան 60 երկրների 1800-ից ավելի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին: Եռօրյա կոնֆերանսին ողջույնի խոսքով դիմեց նաեւ Կենսակի Հոգանք՝ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հաղորդակցության եւ հասարակական տեղեկատվության գծով տեղակալը:

Համաժողովի ընթացքում արծարծված հարցերից էին. ո՞րն է միջոցառման հաջողության գրավականը, ինչպե՞ս կարելի է ընդօրինակել տարբեր երկրների փորձը, ինչպե՞ս կարելի է ամենախելամիտ ձեռով համարել ճյուղային խնդիրները, աշխատանքային ի՞նչպիսի հարաբերություններ հաստատել ՀԿ-ների, ՄԱԿ-ի ու կառավարությունների միջեւ, որպեսզի ապահովվի լիակատար հաջողությունը:

ՔՈՖԻ ԱՆԱՆ

«Նոր հազարամյակի սկիզբն այն պահն է, երբ պետք է ձեւավորվի քաղաքական կամքի նոր դրսեւորումը: ՀԿ-ները լուրջ մտահոգություն արտահայտեցին գլոբալիզացիայի որոշ բացասական ազդեցությունների վերաբերյալ: Նշվեց նաեւ, որ գլոբալիզացիային ընդդիմախոսելը նման է ձգողականության օրենքին հակասելուն: Գլոբալիզացիան պետք է դարձնել դժվարություններն ու թշվառությունը նվազեցնող գործիք եւ ոչ թե հակառակը: Համագործակցությունը կոփվելու է այնքանով, որքանով որ կապահովվի ընդհանուր արժեքների եւ կարգերի այն մակարդակը, որը կհամապատասխանի գլոբալ պահանջներին՝ ի շահ համայն մարդկության: Այդ նշանակում է, որ հարկավոր է մասնավոր կորպորացիաները ներգրավել այն գործընթացներում, որոնք գեր են կարճատեւ շահույթներից...»:

ԿԵՆՍԱԿԻ ՀՈԳԱՆ

«Կոնֆերանսի ընթացքում հնչելու են թե՛ Միավորված ազգերի, թե՛ հանրապետական ու տեղական իշխանությունների եւ թե՛ քաղաքացիական հասարակության ամենափորձառու եւ եռանդուն ներկայացուցիչների տարբեր կարծիքները: Նրանց պատկերացումները խիստ պատասխանատվությամբ կապված են եղել համագործակցության գաղափարի հետ, հատկապես ՄԱԿ-ի եւ քաղաքացիական հասարակության միջեւ աշխատանքային համագործակցության, որն էլ հարատեւ խաղաղության ու համագործակցության լավագույն երաշխիքն է...»:



ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻՆՆՈՐ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ



Ելնելով Գլխավոր քարտուղարի համաձայնարարականներից՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1998թ. դեկտեմբերին որոշեց անցկացնել միջոցառումներ՝ նվիրված նոր հազարամյակին, շեշտելով, որ նոր դարասկզբը «նոր ժամանակաշրջանում ՄԱԿ-ի հեռանկարների նախանշման եւ հստակեցման եզակի եւ խորհրդանշական պահ է»:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան որոշեց իր 55-րդ նստաշրջանը (սկսվում է 2000թ. սեպտեմբերի 5-ին), որ նվիրված է 21-րդ դարի խնդիրներին դիմակայելու համար ՄԱԿ-ի դերը հզորացնելու ուղիների քննարկմանը, անվանել Նոր հազարամյակի նստաշրջան եւ հրավիրել Նոր հազարամյակի գագաթաժողով:

ՄԱԿ-ի անդամ երկրների ղեկավարները կժամանեն Նյու Յորքի ՄԱԿ-ի Կենտրոնական գրասենյակ՝ մասնակցելու ս/թ սեպտեմբերի 6-8-ը կայանալիք Հազարամյակի գագաթաժողովին, եւ դա կլինի պետությունների ու կառավարությունների ղեկավարների ամենամերկայացուցչական հավաքը մարդկության պատմության մեջ:

Դիմակայելով նոր հազարամյակի հիմնախնդիրներին՝ մարդկությունը հնարավորություն ունի փարվելու գոյություն ունեցող միակ գլոբալ կազմակերպությանը՝ ՄԱԿ-ին:

Գագաթաժողովի ընթացքում պետությունների եւ կառավարությունների ղեկավարները հանդես կգան պաշտոնական հայտարարություններով եւ հնարավորություն կունենան մասնակցելու մի շարք կլոր սեղանների բուռն քննարկումներին:

Գագաթաժողովի քննարկումների ընդհանուր ուղղությունները ընդգծված են ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշումներում եւ Գլխավոր քարտուղարի «Սենթ՝ ժողովուրդներս» հազարամյակի զեկուցման մեջ, որը կոչ է անում գագաթաժողովին որդեգրել վեց համամարդկային արժեքներ՝ ազատություն, հավասարություն եւ համերաշխություն, հանդուրժողականություն, խաղաղասիրություն, բնապահպանություն եւ համատեղ պատասխանատվություն:

Հազարամյակի իրադարձություններն աննախադեպ բնույթ կկրեն: Պատմության մեջ առաջին անգամ պետությունների ղեկավարները միջազգային օրենքի պաշտպանության գործում կունենան իրենց անմիջական ներդրումը՝ ստորագրելով եւ վավերացնելով Գլխավոր քարտուղարի կողմից առաջարկված միջազգային համաձայնագրերը: Անդամ երկրները նույնպես կվերանայեն 1990-ականների միջազգային կոնֆերանսի մատնանշած զարգացման յոթ նպատակները եւ կանդորդառնան առաջին անգամ ՄԱԿ-ի, ՀԲ-ի, ԱՄԳ-ի եւ ՏՀԶԿ (OECD)-ի կողմից համատեղ պատրաստված «Բարելավել աշխարհը բոլորի համար» խորագրով զեկույցին, որն ամենայն հավանականությամբ կդառնա անդամ երկրների քննարկման առարկա մինչեւ 2015թ. աշխարհի չքավորությունը կիսով չափ կրճատելու ուղիների եւ մոտեցումների թեմայի շրջանակներում:

Հազարամյակի ասամբլեային եւ հազարամյակի գագաթաժողովին մասնակցելը յուրաքանչյուր երկրի համար միջազգային քաղաքականության եւ ազգային հեղինակության խնդիր է: Հաշվի առնելով միաժամանակ կայանալիք աննախադեպ իրադարձությունների առատությունը՝ անհրաժեշտ է ապահովել այնպիսի կազմով ազգային պատվիրակություններ , որոնք լիարժեք մասնակցություն երաշխավորեն 21-րդ դարում ՄԱԿ-ի պատմությունը կերտող միջոցառմանը:

Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք հետևյալ վեբ կայքերը.

<http://www.un.org/millennium/>; <http://www.un.org/russian/conferen/millennium/>;

and

<http://www.undpi.am>



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԿ-ՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՆ ՊԵԿԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2000թ. սկզբից Հայաստանը սկսել էր «Պեկին+5» համաժողովին նախապատրաստվելու աշխատանքը: Նախապատրաստական գործընթացը ներառում էր թեմատիկ զեկույցներ սեմինարների ընթացքում եւ հատուկ կլոր սեղանների կազմակերպում, որոնք անցկացվեցին ՄԱԿ-ի եւ ՄԱԶԾ-ի գրասենյակների աջակցությամբ:

ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակը ֆինանսավորեց եւ ՄԱԶԾ-ի աջակցությամբ հրատարակեց «Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման գնահատում Հայաստանի ՀԿ-ների կողմից» խորագրով փաստաթուղթը, որն անդրադառնում է ՀԿ-ների կողմից մատնանշված հիմնական խնդիրների՝ կանանց առողջապահության, կանանց դեմ բռնության, կանանց եւ տնտեսության, կանանց եւ իշխանության, մասնագետ կանանց հնարավորությունների վերլուծությանը: Այն նաեւ պարունակում է ՀԿ-ների կողմից տրամադրված տեղեկատվություն՝ առանձին կազմակերպությունների կողմից Պեկինի գործողությունների ծրագրի իրականացմանն ուղղված աշխատանքների համառոտ նկարագրություն:

NGO REVIEW OF IMPLEMENTATION OF BEIJING PLATFORM FOR ACTION

BEIJING + 5
Special Session of the United Nations General Assembly for the Five-Year Review of the Fourth World Conference on Women

ՄԱԶԾ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԿԱՆԱՆՑ ԶԱՆԿԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՅՄԱՆՁԵԼ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆՈՂ ԱՏՅԱՆՆԵՐԻՑ

«Պեկին+5» կոնֆերանսի ավարտին ՄԱԶԾ-ի Գործադիր տնօրեն պրն Մարկ Մելլըք Բրաունը նշեց, որ անցյալ դարաշրջանի սոցիալական, քաղաքական և տնտեսական ակնառու բարեփոխումներից ամենատպավորիչը կանանց առաջընթացն էր, որն առկա էր գրեթե բոլոր երկրներում և կյանքի բոլոր ասպարեզներում: Միաժամանակ հռետորն ընդգծեց այդ առաջընթացի խրախուսումը տարբեր ճակատներից: Այնուամենայնիվ, ըստ նրա, քիչ չեն անելիքները: «Երբ մենք խոսում ենք խորհրդարաններում, բիզնեսում, կրթական համակարգում կանանց դերի մասին և պարզապես ընտրությունների մասնակցելու, սեփականատեր լինելու նրանց իրավունքների մասին, ինչպես նաև բռնությունից և խտրականությունից պաշտպանվածության մասին, ապա տեսնում ենք շատ ու շատ անելիքներ այդ ասպարեզներում գենդերային իրավահավասարության

հասնելու համար: ՄԱԶԾ-ին հանձնարարվել էր գտնել այս բարդ հարցադրումների պատասխանները, օգտագործելով իր հնարավորությունները և վստահելի գործընկերոջ հեղինակությունը, աջակցել ունակությունների զարգացմանն ու հզոր հաստատությունների ստեղծմանը, որոնք մարդկային զարգացումը կտանեն գենդերային զգոնության ճանապարհով: Ասել է թե՛ մենք ջանում ենք զերծ մնալ գենդերային խնդիրներն իբրև սովորական հարցադրումների փաթեթ ներկայացնելուց: Մենք փորձում ենք գենդերային մոտեցումները շրջանառության մեջ դնել քաղաքականության միջոցով և ներդնել մեր գործելաոճի միջոցով, ընդհուպ մեր բոլոր անդամ պետություններում գտնվող գրասենյակներում»:



2000թ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

Այս տարվա Մարդկային զարգացման միջազգային զեկույցի շնորհանդեսը տեղի ունեցավ Փարիզում՝ Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակի ղեկավարությամբ: Նման արարողություններ տեղի ունեցան ավելի քան 70 երկրներում, որտեղ հասարակական և քաղաքական ղեկավարները անդրադարձան զեկույցի հիմնական թեմային, այն է՝ մարդու իրավունքները և մարդկային զարգացումը:

ՄԱԶԾ-ի գործադիր տնօրեն պրն Մարկ Մելլըք Բրաունը ցավով նշեց, որ աշխարհի աղքատ բնակչության մեծ մասի համար մարդու իրավունքները և մարդկային զարգացումը շարունակում են մնալ վերացական ու անիրականանալի հասկացություններ: Փարիզում շնորհանդեսի արարողության ժամանակ պրն Մելլըք Բրաունը նշեց, որ ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց համար տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները չհամադրվեցին ժողովրդավարության խոստումների հետ:

«Անցած տասնամյակում ժողովրդավարական հասարակություններում ապրող բնակչության տեսակարար կշիռը աճեց մոտավորապես մեկ հինգերորդից մինչև երկու երրորդ», - ասաց նա: - Բայց, ժողովրդավարության այդ ավիքն իր հետ բերեց մարդու հիմնական իրավունքները և արժանապատվությունը ապահովող ազնիվ, հաշվետու և ժողովրդավարական համակարգի պահանջներ: Սակայն օրական մեկ ԱՄՆ դոլարից պակաս եկամուտ ունեցող 1,2 միլիարդ մարդկանց, փողոցներում ապրող ու աշխատող 150 միլիոն գործազուրկների և 100 միլիոն երեխաների համար մարդու իրավունքները և մարդկային զարգացումը վերացական և անհասանելի գաղափարներ են»:

Ըստ զեկույցի հեղինակների եզրակացությունների, ՄԱԶԾ-ն վստահ է, որ 2000թ. Մարդկային զարգացման զեկույցը կխթանի մարդու իրավունքների և մարդկային զարգացման հարցերին նվիրված բարձր մակարդակի երկխոսությունները:



2000թ. ՄՁԶ-Ի ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս/թ հուլիսի 12-ին Հայաստանում տեղի ունեցավ 2000թ. «Մարդու իրավունքներ և մարդկային զարգացում» զեկույցի շնորհանդեսը: Միջոցառումը տեղի ունեցավ ՄԱԿ-ի երեւանյան գրասենյակում: Բացման խոսքով հանդես եկավ **Հայաստանում Ֆրանսիայի դեսպանը՝ պրն Միշել Լեգրանը:**

Զեկույցը բնութայն է առնում մարդու իրավունքների և մարդկային զարգացման խնդիրը՝ ելնելով յոթ հիմնական ազատություններից, նշում է մարդու իրավունքների ասպարեզում 1990-ականների առանցքային առաջխաղացումները և 21-րդ դարում սպասվող վտանգները: Նաև կոչ է արվում ձեւավորել նոր ու հստակ մոտեցումներ ու դաշնություններ՝ 21-րդ դարում՝ մարդու իրավունքները համադրելով գլոբալիզացիայի հնարավորություններին և իրողություններին, գլոբալ գործիչների վարքագծին, ինչպես նաև գլոբալ կանոնները՝ նոր դարաշրջանի պահանջներին:

«Բոլոր իրավունքները բոլոր մարդկանց համար» սկզբունքը պահանջում է հասարակության հստակ կազմակերպում՝ ներառյալ ժողովրդավարությունը, աղքատության վերացումը, հասարակական գործիչների հաշվետվությունը, կատարելագործված ու նոր վիճակագրությունը և համագործակցությունը միջազգային ասպարեզում: Զեկույցն առաջարկում է ազգային և միջազգային գործողությունների հինգ առաջնահերթ խնդիրներ: Ուրվագծվում են հինգ ուղույն նախաձեռնություններ, որոնք կհամախմբեն

բեն աշխարհի մարդկությանը մարդու իրավունքների պահպանությունը և մարդկային զարգացումը ապահովելու խնդրում:

ՄԱԶԾ-Ը ԱՇԽԱՏՈՒՄ Է ԶԱՐԳԱՅՆԵԼ ՀԱՄԱՑԱՆՑԸ ԱՌԱՎԵԼ ԱՂՔԱՏ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ա/թ հուլիսին Տոկիոյում տեղի ունեցած 8 առաջատար երկրների ղեկավարների հանդիպմանը ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գործադիր տնօրեն պրն Մարկ Մելլըք Բրաունը հայտարարեց, որ ՄԱԶԾ-ն նախաձեռնում է մի շարք ծրագրեր, որոնց նպատակն է աշխարհի առավել չքավոր երկրներում համացանցի զարգացումը:

ՄԱԶԾ-ն աշխարհի տարբեր կետերում, սկսած Եստոնիայից մինչև Արևելյան Թիմոր, արդեն օժանդակություն է ցուցաբերում ապահովելով համացանցի մուտքը: Կազմակերպությունը սատարում է նոր ցանցերի ստեղծման քաղաքականության մշակմանը եւ օժանդակում է տեղեկատվության եւ կապի տեխնոլոգիաների ասպարեզում:

ՄԱԶԾ-ն արդեն խթանում է առանձին երկրներում «էլեկտրոնային պատրաստականության» ուղղված գործընթացներին: Հիմնվելով 136 երկրներում ՄԱԶԾ-ի գրասենյակների ցանցի վրա՝ կառավարությունների հետ տեւական փոխվստահության հարաբերությունների շնորհիվ կազմակերպությունը մշակում է կոնկրետ քայլեր ազգային տեղեկատվական ոլորտները զարգացնելու ուղղությամբ:

Առաջարկվող մոտեցումները վերաբերում են միջոցների ապահովմանը եւ տեխնիկական աջակցություն տրամադրելուն, օրենսդրական խոչընդոտների վերացմանը եւ պետական ու մասնավոր զանգվածների արդյունավետ համագործակցությանը նպաստող մթնոլորտի ստեղծմանը՝ տեղեկատվական ծառայությունների ամբողջ ծավալը տեղական պայմաններում զարգացնելու նպատակով:

ՄԱԶԾ-ն զբաղվում է չքավորության վերացման եւ մարդկային զարգացման ասպարեզներում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նորարար մոտեցումների մշակմամբ: Առավել առաջնային ուղղություններից է փոխանցումների արժեքի կտրուկ նվազեցման հնարավորությունների ուսումնասիրությունը, որ կկիրառվի փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման գործընթացներում:

ՄԱԶԾ-ն, աջակցելով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար

Քոֆի Անանի առաջարկության իրագործմանը, ՄԱԿ-ի կամավորականների միջոցով սատարում է ՄԱԿ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայությանը՝ զարգացող երկրներում ապրող մասնագետներին վերապատրաստելով եւ սովորեցնելով համացանցի եւ նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: ՄԱԶԾ-ն նաեւ ստանձնեց առաջնային դեր համաշխարհային առողջապահության կազմակերպության եւ այլ գործակալությունների հետ համատեղ իրականացվող Առողջապահական համացանցի ստեղծման գործում, որի շնորհիվ զարգացող երկրներում ընդհանուր ցանցով կմիացվեն մոտ 10000 առողջապահական հաստատություններ:

Երկրներում իրականացվող նախաձեռնություններից է նաեւ «Սիսքո Սիսթեմզ»-ի հետ համատեղ իրականացվող գիտահետազոտական հաստատությունների ցանցի ստեղծումը հատկապես աֆրիկյան զարգացող երկրներում : Բացի այդ, NetAid.org նորարար ցանցակայքը, որը տնօրինվում է համատեղ ՄԱԶԾ-ի եւ «Սիսքո Սիսթեմզ»-ի կողմից, նախաձեռնում է աշխարհով մեկ զարգացման գործընթացի իրականացման աննախադեպ ձեւեր:

2 մլն ԱՄՆ դոլար բյուջե ունեցող APDIP ծրագրի միջոցով, որ ֆինանսավորվում է կառավարությունների եւ մասնավոր հատվածի կողմից, ՄԱԶԾ-ն նպատակ է հետապնդում ժամանակակից տեղեկատվական համակարգերի վերաբերյալ ուսուցման եւ վերապատրաստման հնարավորություններ ապահովել զարգացող երկրների բնակչության համար:

Հայաստանում ՄԱԶԾ-ի օժանդակությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ասպարեզում իրականացվում է «Ազգային տեղեկատվական համակարգ կայուն զարգացման համար (Internet)» նորարարական ծրագրի միջոցով, որը համացանցի մուտք է ուսուցում է տրամադրել մոտ 10000 կազմակերպությունների եւ անհատների տարածաշրջանում առաջին հանրային տեղեկատվական ցանցի՝ «Հայկական ազատ ցանցի» միջոցով:



ՀԱՄԱՑԱՆՑԸ ԵՎ ՀԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ. ԳԼՈՒԲԱԼ ՄՈՏԵՅՈՒՄՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

2000թ. հուլիսին Հայաստանը հյուրընկալեց **Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի** կողմից կազմակերպված «Համացանցը եւ հասարակությունը» խորագրով միջազգային համաժողովը: Համաժողովի համատեղ ֆինանսավորողներն էին ՄԱԶԾ-ն, Եվրոպայի խորհուրդը եւ Բաց հասարակության ինստիտուտը:

Համաժողովը անդրադարձավ տեղեկատվական կապի տեխնոլոգիաների զարգացմանը եւ նրանց ազդեցությանը ժամանակակից հասարակության քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, իրավական, կրթական եւ մշակութային կյանքի վրա: Համաժողովին մասնակցեցին Արեւմտյան Եվրոպայի, ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Վրաստանի եւ Ադրբեջանի մասնագետներ, ինչպես նաեւ սփյուռքի ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովում քննարկվեցին Հայաստանում տեղեկատվական համակարգերի զարգացմանն ուղղված համագործակցության, կառավարության միջամտության եւ միջազգային աջակցության մի շարք ուղղություններ. **ուլորտի զարգացման ռազմավարությունը եւ մարտավարությունը, էլեկտրոնային առևտրի զարգացումը, հանրային կենտրոնների համակարգի զարգացումը, տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա հիմնված դպրոցական ծրագրերի մշակումը, տարածաշրջանային համագործակցությունը:** Ակնկալվում է, որ կնքված համաձայնությունները եւ հաստատված կապերը կնպաստեն առաջխաղացմանը վերը մշված առաջնային ոլորտներում:

ՄԱԿ-ի ԲՅ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՆՕՐԵՆԻ ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ս/ք հուլիսի 14-18-ը ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան ծրագրերի նորանշանակ տնօրեն Կետի Շրոֆը առաջին անգամ Հայաստանում էր ծանոթանալու առաքելությանը: Տնօրենի մշտական գրասենյակը գտնվում է Տիրանայում (Ալբանիա), որտեղ, բացի հայաստանյան ծրագրերից, տնօրինվում են նաև Ալբանիայի, Բուլղարիայի և Վրաստանի ՄԱԲ ծրագրերը:

Այցելությունը հազեցած էր բազմաթիվ հանդիպումներով ինչպես կառավարության, ՄԱԿ-ի գործակալությունների, այնպես էլ նվիրատու հաստատությունների, տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Տիկին Շրոֆը հանդիպում ունեցավ նաև ՀՀ արտաքին գործերի, առողջապահության նախարարների և վիճակագրության ազգային ծառայության նախագահի հետ:

Վերջին 5 տարիներին համագործակցող կողմերը՝ ՀՀ կառավարության ներկայացուցիչները և միջազգային ու տեղական կազմակերպությունները, համատեղ վերանայեցին ՄԱԲ-ի ներկա գործունեությունը:

Տնօրենի այցելության հիմնական նպատակն էր ՄԱԿ-ի ԲՀ-ի և կառավարության հետագա համագործակցության ուղիների քննարկումը: Ծրագրերի տնօրենը նշեց, որ չնայած ծանր ֆինանսական վիճակին՝ ՄԱԿ-ի ԲՀ-ն պատրաստ է աստարել Հայաստանում Վերարտադրողական առողջության ազգային ծրագրի իրականացմանը՝ հավաքագրելով անհրաժեշտ միջոցներ և նպատակահարմար օգտագործելով հիմնադրամի հսկայական տեխնիկական ներուժն ու փորձը:

ՄԱԿ-ի ԲՀ-ի ծրագրերի ներկա փուլը մոտենում է ավարտին, և հաջորդ փուլը սկիզբ է առնելու աշնանը: Մշակված ծրագրի իրականացման գործընթացը կսկսվի հաջորդ տարի: Այս շրջանում, մինչև ծնողական ծառայությունների և սեռավարակների գիտահետազոտական կենտրոնի հետ սերտ համագործակցությամբ, շեշտը կդրվի մոր և մանկան կենտրոններում սեռավարակների, նախաքաղցկեղային և քաղցկեղային հիվանդությունների հետազոտությունների վրա:

Մի այլ խնդիր, որի վրա ՄԱԿ-ի ԲՀ-ն կսեռնի իր ուշադրությունը, հակաբեղմնավորիչների սոցիալական շուկայահանումն է, որ թույլ կտա դրանց անվճար մատակարարումից (որն այնքան էլ տեսական չի կարող լինել) մեղմ անցում կատարել որակյալ և մատչելի գներով մատակարարմանը:

Այս նոր փուլում, Բնակչության և զարգացման միջազգային կոնֆերանսի (ԲԶՄԿ) Գործողությունների ծրագրի համաձայն, կշարունակվեն նաև կրթական-տեղեկատվական քարոզարշավի միջոցառումները: Վերարտադրողական առողջության ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող տեղական հասարակական կազմակերպությունների ցանցը կծառայի ԲԶՄԿ-ի նպատակներին՝ կրթելով և տեղեկատվություն մատուցելով հասարակությանը վերարտադրողական առողջության տարբեր հայեցակետերի վերաբերյալ:

Տիկին Շրոֆը միանգամայն արդյունավետ համարեց իր այցելությունը երկրին ծանոթանալու, վերարտադրողական առողջության ընդամուր իրավիճակը, առկա հնարավորություններն ու ներուժը գնահատելու և հետագա գործողությունները պատկերացնելու առումով:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐԸ ՓՐԿԵՔ ԿԱՆԱՆՑ ԿՅԱՆՔԸ

Հայաստանում արդեն ավանդույթ է դարձել տոնել Բնակչության համաշխարհային օրը՝ հուլիսի 11-ը: Վերջին տարիներին ՄԱԿ-ի ԲՀ-ի ֆինանսավորմամբ ամբողջ աշխարհում բազմաթույթ միջոցառումներով նշվում է այս օրը:

2000թ. Բնակչության օրվա նշանաբանն է «Փրկե՛ք կանանց կյանքը»: Ինչո՞ւ: «Այսօր չափազանց շատ աղջիկներ, ի տարբերություն տղաների, զուրկ են կրթություն ստանալու իրավունքից: Այսօր չափազանց շատ կանայք զուրկ են երեխաներ ունենալու և առհասարակ հղիանալու ընտրության իրավունքից: Այսօր շատ կանայք, հատկապես հակամարտությունների ժամանակ, զոհ են դառնում սեռական բռնության: Դեռ շատ կանայք ընդհատում են իրենց հղիությունը, որ այնքան էլ ապահով չէ, ենթարկվում են սեռական օրգանների անվսցման և այլ ավանդական դաժան սովորույթների»,- Բնակչության օրվան նվիրված իր ուղերձում նշեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը:

Հայաստանում նույնպես վերարտադրողական առողջությունը և մինչև իսկ կանանց կյանքը վտանգող շատ գործոններ կան: Դրանք են՝ աբորտների բարձր տոկոսը, սեռավարակներով տառապող կանանց թվի աճը և դեռահասների սեռական դաստիարակության թերացումը: Եվ եթե անհասպող միջոցներ չձեռնարկվեն ՉԻԱՀ-ի տարածումը կանխելու ուղղությամբ, այն լուրջ սպառնալիք կդառնա կանանց առողջության ու կյանքի համար:

Այս խնդիրներն էին ահա արծարծվում ս/ք հուլիսի 11-ին Բնակչության օրվան նվիրված միջոցառման ժամանակ ՄԱԿ-ի ԲՀ-ի և նրա հետ համագործակցող Հայաստանի բժիշկ ուսանողների ասոցիացիայի (SAMSA) ու Գինեկոլոգների և Էնդոկրինոլոգների ասոցիացիայի (AGE) կողմից:

Պատրաստվեց մի ուշագրավ պլակատ՝ օրվա նշանաբանով, որ նախօրոք փակցվեց մարդաշատ վայրերում: Հուլիսի 11-ին Կոմիտասի անվան երաժշտանոցին հարող պու-

րակում կազմակերպվեց բացօթյա համերգ՝ մասնորոգ Դարաբեկյանի դեկավարությամբ: SAMSA-ի անդամները ունկնդիրներին բաժանեցին ՉԻԱՀ/ՄԻԱՎ-ի խնդրի ու դրական խարգելման միջոցների վերաբերյալ մոտ 200 գրքույկներ:

Նույն օրը AGE-ը համալսարանի մի խումբ ուսանողների համար դասախոսություն կարդաց վերարտադրողական առողջության, սեռավարակներից և ՉԻԱՀ/ՄԻԱՎ-ից պաշտպանվելու ուղիների մասին: Լսարանի չափազանց հետաքրքրասիրության և մեծ թվով հարցադրումների առկայության պատճառով դասախոսությունը նախատեսվածից երկու անգամ ավելի երկար տևեց: Այս իրողությունը ցույց է տալիս, որ Հայաստանում, հատկապես երիտասարդության շրջանում վերարտադրողական առողջության մասին, որն անմիջականորեն առնչվում է մարդու կյանքին, ճշգրիտ տեղեկատվության մեծ պահանջարկ կա: Սա առաջին էր դասախոսությունների շարքում, որ AGE-ն այս տարի անցկացնելու է Երևանի պետական համալսարանի 19 ֆակուլտետներում:

Միաժամանակ համայնքների համար SAMSA-ն անցկացնելու է 7 սեմինար, ներառյալ փախստականներով խիտ բնակեցված 2 համայնք:





ԱՊՅ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ՔՆՆԱՐԿԵԼ Է ՀԵՏԱԳՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ



Ս/թ հուլիսի 13-14-ը տեղի ունեցավ ԱՊՅ երկրներում փախստականների, բռնի տեղահանվածների, ակամա տեղահանվածների եւ վերադարձվողների հարցերին նվիրված ԱՊՅ երկրների տարածաշրջանային կոնֆերանսի վերջին 5-րդ նիստը, որի նպատակն էր գնահատել 1996թ. ընդունված Գործողությունների ծրագրի նվաճումները եւ կատարման ընթացքը, վեր հանել այն բնագավառները, որոնք հատուկ ուշադրության պետք է արժանանան ապագայում եւ հետագա գործողությունների վերաբերյալ համապատասխան որոշում կայացնել: Վերջինս թելադրված է հենց Գործողությունների ծրագրով, որտեղ նշված է. «2000թ. հանդիպումը կեզրափակի գործընթացը եւ աշխատանքային խումբն այնուհետ կորոշի հետագա համապատասխան գործողությունները»:

Կոնֆերանսին մասնակցել են 41 պետություն, 3 դիտորդ, 11 միջպետական կազմակերպություն, 4 այլ միություն եւ 126 հասարակական կազմակերպություն:

Կոնֆերանսի համաձայնագրահոդներն էին պրն Սյորեն Ջեսսեն-Պետերսենը՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զեռագույն հանձնակատարի օգնականը, պրն Բրունոն Սաքկինլին Միգրացիայի միջազգային կազմակերպության գլխավոր տնօրենը, պրն Անդրեաս Յոլբախը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության տարածքային ներկայացուցիչը եւ պրն Կնուտ Լանգելանը՝ Նորվեգիայի ժամանակավոր հավատարմատարը՝ ԵԱՀԿ Եռյակի անդամի լիազորությամբ:

Պրն Սյորեն Ջեսսեն-Պետերսենը՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով զեռագույն հանձնակատարի օգնականը, իր բացման խոսքում նշեց կոնֆերանսի հիմնական նպատակները եւ վերջին չորս տարիների ընթացքում Գործողությունների ծրագրի իրագործման արդյունքները:

ԱՊՅ կոնֆերանսի կարեւորագույն ձեռքբերումն այն է, որ էական ներդրում ունեցավ հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության կարեւոր մասը դարձնելու գործում:

Մյուս նշանակալից ձեռքբերումը միջազգային կազմակերպությունների միջեւ համագործակցության զարգացումն ու ամրապնդումն էր, ներառյալ ՄՄԿ-ն, ԵԱՀԿ-ն, ԺՆԻԳ-ը, Եվրոխրիստիդը եւ ՄԱԿ-ի ՓԳՀ-ն:

Փախստականների հարցերով զեռագույն հանձնակատարի օգնականը նշեց, որ կոնֆերանսի հաճախ անտեսվող հաջողություններից մեկն էլ այն էր, որ դրա ընթացքում լարված պահերը հակադրության չէին վերածում: Այս գործընթացը հնարավորություն տվեց ցույց տալ, թե ինչպես բազմակողմանի մարդասիրական գործողությունները կարող են նպաստել տարածաշրջանի կայունացմանը:

ԱՊՅ կոնֆերանսում Հայաստանի պատվիրակության կազմում էին ՀՀ կառավարության առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության պետ պրն Գագիկ Եգանյանը, ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչը, Ժնեւում

պրն Կարեն Նազարյանը եւ ՄԱԿ-ի Հայաստանի մշտական ներկայացուցչության երրորդ քարտուղար տիկ Արփինե Գեւորգյանը: Կոնֆերանսին մասնակցում էին նաեւ Հայաստանի մի շարք հասարակական կազմակերպություններ, որոնք անմիջականորեն կամ անուղղակի կերպով առնչվում են ԱՊՅ կոնֆերանսում բարձրացված հարցերին:

Պետությունների կառավարությունների ելույթների ընթացքում Հայաստանյան պատվիրակությունը նշեց, որ Գործողությունների ծրագիրը եղել է մնում է այն անբակտելի հիմքը, որը հնարավորություն է տալիս գտնել միգրանտների եւ փախստականների խնդիրների լուծումներ:

Ինչպես ներկայացվեց պատվիրակության կողմից, կառավարությունը առաջնահերթ ուշադրություն է դարձնում հետեւյալ հարցերին. բնակարանային խնդրի լուծում, աշխատանքով ապահովում, փախստականների կորցրած սեփականության որպես նրանց ինտեգրացիայի եւ նատուրալիզացիայի հիմնական խոչընդոտի, փոխհատուցման խնդրի լուծում, բռնի տեղահանվածների վերադարձ իրենց հիմնական բնակավայրեր՝ սահմանամերձ շրջաններ, Արեւելյան Եվրոպայի երկրներից արտաքսված հայ ապօրինի միգրանտների վերաինտեգրացում, ԱՊՅ մի շարք երկրներից բռնի տեղահանված մարդկանց առնչվող խնդիրներ, ապաստան փնտրողների, ինչպես նաեւ սահմանների վերահսկողության ուժեղացման խնդիրներ:

Հանդիպման վերջում մասնավորապես նշվեց, որ կոնֆերանսի ընթացքում առաջ քաշված Գործողությունների ծրագրի մի շարք հարցեր հասան վերջնականապես: Դրանք են՝

- կազմակերպել միջազգային ֆորում բնակչության տեղահանության խնդիրները քննարկելու նպատակով, վերանայել բնակչության տեղաշարժը տարածաշրջանում,
- պարզաբանել խնդրո առարկա կատեգորիաները,
- նախագծել ամբողջական ռազմավարություն,
- կառավարել միգրացիոն շարժումները:

Ի լրումն պետք է նաեւ նշել, որ այն կիսբանի հասարակական կազմակերպությունների սեկտորի եւ քաղաքացիական հասարակության զարգացմանը, ինչպես նաեւ կհաստատի կենսական համագործակցություն:

Ըստ ՄԱԿ-ի Փախստականների գծով զեռագույն հանձնակատարի օգնականի, կոնֆերանսին հաջորդող կանոնավոր պաշտոնական գործողությունների ծրագիրն ավարտին հասավ աշխատանքային խմբի այս հանդիպման ժամանակ: Այնուամենայնիվ, դեռեւս բազմաթիվ աշխատանքներ կան, ինչպես օրինակ՝

- ինստիտուցիոնալ բացթողումներին անդրադառնալը, ներառյալ օրենսդրությունների կիրառումը եւ միջազգային պարտավորությունների կատարումը խնդրո առարկա պետությունների կողմից,
- տարածաշրջանում այս դասի մարդկանց խմբերին որոշակի օգնությունն ու պաշտպանությունը եւ նրանց խնդիրների մշտական լուծումների որոնումը,
- կոնֆլիկտների լուծման ուղղությամբ ջանքերի ակտիվացումը,
- միջազգային համայնքի կողմից որոշակի ֆինանսական օգնության ապահովումը,
- միջազգային կազմակերպությունների եւ այլ հաստատությունների միջեւ համագործակցության ամրապնդումը,
- հասարակական կազմակերպությունների սեկտորի զարգացումը:

Պրն Ջեսսեն-Պետերսենն ասաց, որ այժմ 1996թ. Ժնեւյան կոնֆերանսի նոր, ավելի գործուն փուլ է սկսվում:

Նա ավելացրեց, որ առաջարկությունների ընդունմամբ կոնֆերանսն ընթանում է փաստաթղթով ընդունված չորս հիմնական բնագավառների խնդիրների լուծումները գտնե-

լու համար համագործակցության ավելի բարձր մակարդակի հասնելու ուղղությամբ: Առաջարկությունները ստեղծել են բավականին ճկուն համակարգ հետագայում հարկ եղած դեպքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու համար:

Ավարտելով խոսքը՝ պարոն Ջեսսեն-Պետերսենն ասաց. «Յետաշխատանքային խմբի ժամանակահատվածում առաջին գործնական քայլը կլինի առաջնորդ գործակալությունների միջև հետագա խորհրդատվությունների կազմակերպումը, որպեսզի նախագծեն աշխատանքային պլաններ համապատասխան թեմատիկ աշխատանքային խմբերի համար: Ներգրավված գործակալությունները կհանդիպեն սեպտեմբերի սկզբին գոյություն ունեցող համաձայնությունները քն-

նարկելու նպատակով: Սեպտեմբերի վերջին կլինեն քննարկումներ հանդիպումների արդյունքների, ինչպես նաեւ հետագա թեմատիկ գործողությունների գործնական քայլերի վերաբերյալ:

Բարձր մակարդակի քաղաքական եւ համապատասխան ֆինանսական աջակցությունը, համակարգում եւ համագործակցությունը, նվիրվածությունը նպաստում են հաջողությամբ շարունակել այս գործընթացը»:

ԿՈՆՖԵՐԱՆՍ ԱՆՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ս/թ հուլիսի 26-27-ը ՄԱԿ-ի ՓԳՅ-ն կազմակերպել էր կոնֆերանս՝ նվիրված անքաղաքացիության եւ քաղաքացիության ձեռքբերմանը վերաբերող հարցերին: Կոնֆերանսը, որ նախաձեռնվել էր ՄԱԿ-ի ՓԳՅ-ի եւ Եվրախորհրդի համատեղ ջանքերով, տեղի ունեցավ Երևանում:


Կոնֆերանսին մասնակցեցին Եվրախորհրդի փորձագետներ տիկ. Տանյա Գերվինը, պրո Բուլանդ Շերերը, պրոֆ. Ջիովաննի Կոյանեկը, ՄԱԿ-ի ՓԳՅ-ի կենտրոնական գրասենյակից տիկ. Քերոլ Բաչելերը, ինչպես նաեւ Հայաստանի կառավարության, Ազգային ժողովի, իրավաբանական եւ ակադեմիական շրջանակների, դիվանագիտական կորպուսի եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ արտաքին գործերի նախարար պրո Կարդան Օսկանյանն իր բացման ելույթում նշեց, որ Հայաստանը 1994թ. միացել է Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին եւ Անքաղաքացիության դեպքերի նվազեցման մասին կոնվենցիաներին: Ըստ ՀՀ արտգործնախարարի, վերջին տարիներին Հայաստանը շատ քայլեր է ձեռնարկել անքաղաքացիության դեպքերի կրճատման ուղղությամբ: Հայաստանում կան մեծ թվով փախստականներ, որոնք Հայաստան են եկել խորհրդային ժամանակաշրջանում: Սակայն այս մարդիկ, հորհրդային Միության փլուզումից հետո մեխանիկորեն կորցնելով իրենց քաղաքացիությունը, մինչ օրս ՀՀ քաղաքացիներ չեն: Ըստ Օսկանյանի, համապատասխան օրենսդրություն, մասնավորապես ՀՀ օրենքները քաղաքացիության եւ փախստականների մասին, արդեն ընդունվել է: Պրո նախարարն ասաց, որ անհրաժեշտ է այս օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին, քանի որ Հայաստանը շուտով կդառնա Եվրախորհրդի լիիրավ անդամ, եւ նրան կառաջարկվի վավերացնել նաեւ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան: Նախարարը շեշտեց կոնֆերանսի կարեւորությունը եւ ժամանակի ճիշտ ընտրությունը՝ ընդգծելով կոնֆերանսում բարձրացված խնդրի հետ առնչվող իշխանության մարմինների համար այս գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունը:

Կոնֆերանսում հատուկ ուշադրության արժանացան ներկայացված խնդրի վերաբերյալ միջազգային, տարածաշրջանային եւ տեղական մարմինների մոտեցումները: Կառավարական ատյանների, հասարակական եւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները ներկայացրեցին իրենց կարծիքները՝ իրավական տեսանկյունից քննարկելով անքաղաքացիության եւ քաղաքացիության ձեռքբերման խնդիրները:

ԵԱՀԿ ներկայացուցիչը մասնավորապես ասաց, որ ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքը զիջում է Ադրբեջանի նույն օրենքին, քանի որ վերջինս հնարավորություն է տալիս քաղաքացիություն ձեռք բերել այն անձանց, ովքեր բնակվել են այդ երկրում մինչև տվյալ օրենքի ընդունումը: Ըստ ԵԱՀԿ ներկայացուցչի, դա նշանակում է, որ, հա-

մաձայն Ադրբեջանի օրենքի, հայազգի փախստականները Ադրբեջանից չեն վերադառնալու եւ վերստին քաղաքացիություն ստանալու իրավունքից, մինչդեռ Հայաստանի համանման օրենքը նման հնարավորություն չի տալիս Հա-



յաստանից ադրբեջանցի փախստականներին:

Մասնակիցները նաեւ քննարկեցին երկքաղաքացիության եւ բազմաքաղաքացիության թեր ու դեմ կողմերը: Տեղական իշխանությունների ներկայացուցիչները եւ ակադեմիական շրջանակներն այն կարծիքն արտահայտեցին, որ երկքաղաքացիությունը Հայաստանի համար անընդունելի է, քանի որ կարող է բազմապատկել քաղաքացու պարտավորությունները (հարկերի վճարում, զինվորական ծառայություն): Նշվեց, որ երկքաղաքացիությունը ավելի ընդունելի է մեծ պետությունների համար, քանի որ այդպես նրանք կարող են ազդեցություն ունենալ այն երկրների քաղաքական գործընթացների վրա, որտեղ ապրում են իրենց քաղաքացիները:

Սակայն երկքաղաքացիության եւ բազմաքաղաքացիության կողմնակիցները նշում են նաեւ դրական կողմեր, եւ այն երկրները, որոնք նախկինում սկզբունքորեն դեմ էին այս գաղափարին, այսօր ընդունում են այն ելճնելով դրա նպատակահարմարությունից:

Եզրավակելով կոնֆերանսը՝ Եվրախորհրդի եւ ՄԱԿ-ի ՓԳՅ-ի ներկայացուցիչները շեշտեցին, որ տվյալ ոլորտի Հայաստանի օրենսդրական դաշտը հիմնականում բավականին մոտ է եվրոպական չափանիշներին, ուստի Հայաստանի համար դժվար չի լինի միանալ Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիային, թեեւ գործող օրենքում որոշ լրացումներ կատարելու կարիք կարող է առաջանալ:



Ս/ք հուլիսի 31-ին ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի հայաստանյան գրասենյակը բացեց լուսանկարների ցուցահանդես՝ «Լույս թունելի վերջում» խորագրով: Յուրահանդեսը նվիրված էր ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ի 50-ամյակին եւ առաջինն էր այս պատմական իրադարձությանը նվիրված միջոցառումների շարքում: Յուրահանդեսի հեղինակը հայտնի լուսանկարիչ **Գերման Ավագյանն** է, որը մինչ այդ արդեն կազմակերպել էր ծեր փախստականների կյանքը պատկերող լուսանկարների ցուցահանդես:

ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ի Հայաստանի ներկայացուցիչ պրն Թումաս Բիրաթն իր բացման խոսքում ասաց, որ ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ն ստեղծվել է 1950թ.՝ 5 տարի ժամանակով: «Սակայն այդ ժամկետն արդեն 10 անգամ երկարացվել է, եւ այսօր մենք մուտք ենք գործում նոր հազարամյակ 50 տարվա աշխատանքա-

յին փորձով եւ մեր խնամքի տակ գտնվող 22 միլիոն փախստականներով»,- ավելացրեց նա:

Տոնակատարության հիմնական օրը նախատեսված է 2000թ. դեկտեմբերի 14-ին: Սակայն միջոցառումները պլանավորված են մինչեւ 2001թ. հուլիսի 28-ը, երբ ՄԱԿ-ի ՓԳ-Հ-ն կտոնի 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 50-ամյակը:

«Լույս թունելի վերջում» ցուցահանդեսում ներկայացված Գերման Ավագյանի լուսանկարները արտահայտում են կույր եւ մասամբ կույր երեխաների կյանքը, որոնք ապրում են Երեւանի կույր եւ մասնակի կույր երեխաների հատուկ գիշերօթիկ դպրոցում: Նկարներում պատկերված են եւ՝ փախստական, եւ՝ ոչ փախստական երեխաներ: Ըստ պրն Բիրաթի, փախստական եւ ոչ փախստական երեխաների միջեւ տարբերություն չկա, «քանի որ նրանք ապրում են նույն գիշերօթիկ դպրոցում, սնվում նույն սննդով, ունեն միեւնույն խնդիրները եւ մեր խնամքի անհրաժեշտությունը»:

Իր ելույթի վերջում պրն. Բիրաթն այն կարծիքը հայտնեց, որ հասարակության զարգացածության աստիճանի որոշման համար տարբեր չափանիշներ գոյություն ունեն, սակայն ամենակարեւորն ու ամենանշանակալիցը կարիքավորների նկատմամբ հասարակության վերաբերմունքն է:

Երեւանից հետո լուսանկարները կցուցադրվեն Գյումրիում, Վանաձորում, Ստեփանավանում եւ Հայաստանի այլ քաղաքներում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ԳՈՐԾԵՐՈՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովը ստեղծվել է 1991թ. ՀՀ Գերագույն խորհրդի որոշմամբ, որով դրա ձեւավորումը հանձնարարվեց արտգործնախարարությանը: Նույն որոշմամբ Հայաստանը 1992թ. հունիսի 9-ին անդամագրվել է ՄԱԿ-ի **Կրթության, գիտության եւ մշակույթի կազմակերպությանը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ին**:

Հիմնադրման օրից ի վեր ազգային հանձնաժողովը իրագործել է բազմաթիվ ծրագրեր կրթության, գիտության, մշակույթի, կանանց եւ երիտասարդության խնդիրների, մարդու իրավունքների բնագավառներում:

Ավելորդ չէ նշել, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն միակ կազմակերպությունն է, որն ստեղծել է ազգային հանձնաժողովների ժողովրդավարական ինստիտուտը եւ նրանց միջոցով է համագործակցում անդամ երկրների հետ:

Ազգային հանձնաժողովն, ըստ էության, կարելի է համարել տվյալ պետության հավաքական միտքը, որը կոչված է կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտներում ներդաշնակել ազգային եւ

համամարդկային խնդիրները:

Կրթության բնագավառում ազգային հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակը եղել է մնում է Հայաստանի կրթական համակարգը միջազգային կրթական համակարգին համադրելը: Այս նպատակով 1993թ. հանձնաժողովին կից ստեղծվեց կրթության կոմիտե, որի մեջ ընդգրկված մասնագետները ՅՈՒՆԵՍԿՕ-ի արտասահմանյան փորձագետների հետ համատեղ պատրաստեցին «**Հայաստանում արտակարգ իրավիճակի պայմաններում կրթության բարեփոխումների մասին**» համապարփակ զեկույցը: Պետք է ասել, որ այդ զեկույցը կրթության ասպարեզում միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի համագործակցության առաջին փորձն էր: Դրան հաջորդեցին ՄԱԾԾ-ի եւ Համաշխարհային բանկի (ՀԲ) ծրագրերը կրթության բնագավառում, որոնց համար սկզբնական շրջանում զեկույցը ծառայեց որպես հիմնական փաստաթուղթ:

Նույնը կարելի է ասել նաեւ կրթության բնագավառում ստեղծված կազմակերպական եւ վիճակագրական համակարգ

ստեղծելու ծրագրի մասին: Այս հարցը նույնպես առաջին անգամ կարելի էր քննարկել 1995թ. կրթության և գիտության նախարարության և վիճակագրության մի շարք աշխատակիցների համար կազմակերպված սեմինար *EMIS (Education Management Information System)* ծրագրին ծանոթացնելու նպատակով: Ինչպես հայտնի է, ներկայում ԶԲ-ն Զայաստանում իրականացնում է կրթության համակարգի տեղեկատվական ցանց ստեղծելու ծրագիրը, որին նույնպես մասնակցում է ՅՈՒՆԵՍԿՕ-ն:

Կրթության բնագավառի այլ առաջնահերթ խնդիրներից է մարդու իրավունքների, քաղաքացիական դաստիարակության և ժողովրդավարության վերաբերյալ գիտելիքների հնարավորինս զանգվածային և հետևողական տարածումը: Բոլորսովի անվան օտար լեզուների ինստիտուտում ներկայումս հիմնվում է **Մարդու իրավունքների և ժողովրդավարության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոն**, որի նպատակն է մշակել մարդու իրավունքների և ժողովրդավարության սկզբունքների դասավանդման ազգային հայեցակարգն ու մեթոդաբանությունը, մասնագետներ պատրաստել դպրոցներում և այլ կրթական հաստատություններում առարկան դասավանդելու համար:

Մշակույթի բնագավառում հանձնաժողովի գործունեությունը հիմնականում ծավալվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային կոմպենցիաների շրջանակներում: **ՅՈՒՆԵՍԿՕ-ի Զամաշխարհային բնական և մշակութային արժեքների պահպանման մասին կոնվենցիայի** շրջանակներում ստեղծված է համաշխարհային ժառանգության գրանցամատյան, որում զետեղված են աշխարհի ամենարժեքավոր և հազվագյուտ բնական և մշակութային արժեքները: Անկախություն ձեռք բերելուց հետո միայն Զայաստանը իրավունք ստացավ ներկայացվելու գրանցամատյանում: Ներկայումս զետեղված են **Հաղպատի և Սամահինի** վանական համալիրները՝ որպես մեկ ընդհանուր տարածք, **Գեղարդի** վանական համալիրը Ազատ գետի հարակից հովտի հետ՝ որպես բնության և մշակույթի միասնական տեղավայր:



Աշխատանք է տարվում Եջմիածնի Մայր տաճարը, եկեղեցիներն ու Ջվարթնոց հնավայրը վերը նշված գրանցամատյանում զետեղելու ուղղությամբ, և հույս կա, որ 2001թ., երբ նշվելու է Զայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակը, ամենայն հայտնի հոգեւոր կենտրոնը նույնպես իր արժանի տեղը կգտնի աշխարհի հրաշալիքների շարքում: Զամաշխարհային ժառանգության գրանցամատյանում զետեղված լինելը թե՛ պատվաբեր է, թե՛ մեծ նշանակություն ունի զբոսաշրջիկության զարգացման համար, քանի որ գրանցամատյանում տեղ գտած մշակութային արժեքներն ամբողջ աշխարհում գովազդվում և ընդգրկվում են զբոսաշրջիկային տարբեր երթուղիների մեջ:

Զանձնաժողովը աշխատում է նաև մշակութային կոմպենցիաների կատարելագործման ուղղությամբ: Այսպես, Զայաստանի ակտիվ մասնակցությամբ 1999թ. ընդունված ՅՈՒՆԵՍԿՕ-ի (Զաագայի) Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պահպանության մասին կոնվենցիայի երկրորդ հավելյալ արձանագրությունը: Գաջողվել էր մտցնել Զայաստանի համար նպաստավոր փոփոխություններ, ուստի Զայաստանը անմիջապես ստորագրեց արձանագրությունը, և այժմ սպասվում է, որ Ազգային ժողովը կվավերացնի այն:

Մշակույթի ոլորտում հանձնաժողովի

գործունեության մի զգալի մասը նվիրված է Զայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին: Դեռևս 1995թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի 28-րդ Գլխավոր կոնֆերանսն ընդունեց բանաձև (28 C/5 3.9), որով արձանագրվեց այդ տարելիցի բացառիկ նշանակությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև համաշխարհային քաղաքակրթության պատմության համար:

Այս և եկող տարի նախատեսվում է մի շարք ծրագրերի իրականացում, որոնց նպատակը կլինի հայոց հոգեւոր և աշխարհիկ մշակույթների քարոզչությունը, հայագիտության զարգացումը, ինչպես նաև լայն հասարակայնության մերձեցումը հայոց ձեռակերտ և անձեռակերտ արժեքներին:

Գիտության ոլորտի նշանակալի ծրագրերից արժե նշել **Կյանքի գիտությունների ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի** ստեղծումը, որի հիման վրա վերջերս ԶԶ կառավարության որոշմամբ ստեղծվեց **Միջազգային բժշկականսարանական բարձրագույն դպրոց**: Ակնկալվում է, որ այդ դպրոցում կուսանեն և թեզեր կպատրաստեն երիտասարդներ տարբեր երկրներից՝ Իրանից, Զնկաստանից, Գուրմախից, Ուկրաինայից, Զինաստանից և այլն: Մյուս կարևոր գիտական ծրագիրը, որի

իրականացմանը գործում կերպով մասնակցում է նաև ազգային հանձնաժողովը, **SESAME-ն** է: Այս ծրագրի նպատակն է Երեւանի Ֆիզիկայի ինստիտուտի **ԱՐՈՒՄ** արագացուցչի հիմքի վրա Զայաստանում ստեղծել նոր միջազգային գիտական կենտրոն Միջին և Մերձավոր Արևելքի, ինչպես նաև մի շարք այլ երկրների համար: **SESAME** ծրագրի իրականացումը Զայաստանում հնարավորություն կտա ոչ միայն լավագույն օգտագործել տարածաշրջանի մյուս երկրների համեմատությամբ ունեցած առավելությունը՝ ի բարօրություն թե՛ Զայաստանի, թե՛ տարածաշրջանի մյուս երկրների, այլև կնպաստի տարածաշրջանում խաղաղության ամրապնդմանը:

Զանձնաժողովի գործունեության ուշադրության կենտրոնում են նաև երիտասարդության խնդիրները: 1997թ. ստեղծվեց **Երիտասարդական նախաձեռնությունների ստորման կենտրոն /ԵՆԱԿ/**, որն իրականացրել է մի շարք ծրագրեր՝ ուղղված երկրում տեղեկատվական դաշտի ստեղծմանը, երիտասարդության համար տեղեկատվության մատչելիության բարձրացմանը և այլն:

Ազգային հանձնաժողովն ունի **Փաստաթղթային և տեղեկատվական կենտրոն**, որը տեղակայված է Երեւանի պետական համալսարանի ռեզնանս-գերմանական բանասիրության ֆակուլտետում: Այդ կենտրոնում ի պահ են տրվում նյութեր ՅՈՒՆԵՍԿՕ-ի զանազան միջոցառումների մասին, որոնք մատչելի են բոլոր քաղաքացիների համար: Իր գործունեության մասին հասարակայնությանը իրազեկ պահելու համար ազգային հանձնաժողովը նաև տպագրում է «Տեղեկագիր», որտեղ պարբերաբար ներկայացվում են նյութեր հանձնաժողովի իրականացրած ծրագրերի, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ում տեղի ունեցած տարբեր միջոցառումների և կարեւորագույն փաստաթղթերի մասին:



«ԿՅԱՆՔԻ ՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՆՈՒՄ Է ՍՅՈՒՆԻՔ

ՅՈՒՆԻՍԵՖ-ը, GTZ-ի, ԶԶ կրթության եւ գիտության նախարարության ու Սյունիքի մարզի կրթության բաժնի համագործակցությամբ սկսել է «Կյանքի հմտություններ» ծրագիրը ներդնել Սյունիքի մարզի տարրական դպրոցներում:


Հայաստանում «Կյանքի հմտություններ» ծրագիրը սկզբնավորվել է դեռևս 1998թ. եւ գործում է ինտերակտիվ յուրացման մեթոդների եւ ուսումնական ծրագրերի այնպիսի մոդուլների ներմուծմամբ, որոնք գործում կերպով խթանում են երեխայի կողմից նյութի յուրացման գործընթացը: Ծրագրի նպատակն է նախապատրաստել աշակերտներին առողջ ընտրությունների եւ զինել նրանց ժողովրդավարական, ազատ շուկայական հարաբերությունների հասարակությունում ապրելու համար: «Կյանքի հմտությունները» լրացնում է ուսումնական ծրագրերի բացերը առողջ կենսակերպին, ընտանեկան եւ համայնքային փոխհարաբերություններին, շրջակա միջավայրի պահպանությանը, հակասությունների լուծմանը եւ երեխաների իրավունքներին առնչվող ոլորտներում: Հիմնվելով ընթացիկ փորձի վրա՝ յուրաքանչյուր ուսումնական տարի ծրագրում կընդգրկվեն նորանոր դպրոցներ:

Ծրագրի տարածումը Սյունիքում եզակի հնարավորություն է ընձեռում պայմաններ ստեղծել այդ մարզում դպրոցական կայուն ցանցի համար, ինչպես նաեւ փոփոխություններ ներմուծել ուսումնական ծրագրերում եւ դասավանդման մեթոդներում՝ այսպիսով ի մի բերելով կրթական բարեփոխումների երկու վճռորոշ ոլորտներ: Ի լրումն ծրագրի այլ կարեւոր գործոնների, Սյունիքի նախաձեռնությունը ընդգծված գյուղատնտեսական թեքում ունի, որն էական է մարզային ենթակառուցվածքի համար: Անուան ընթացքում հիմք դրվեց սեպտեմբերին դպրոցներում «Կյանքի հմտությունների» հաջող մեկնարկի համար: Օգոստոսին ավարտվեց դպրոցների ղեկավարների ներածական ուսուցումը եւ 64 ուսուցիչների ուսուցումը, սկսվեց ծրագրի վերաբերյալ իրազեկության բարձրացման քարոզարշավ տեղական մամուլով եւ թերթիկների տարածմամբ համայնքների անդամներին:

ԵՐԵՒԱՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՈՒՂԵՐՁ ԱՇԽԱՐՀԻՆ

Երեխաների հեղինակած գրքերի հրատարակումը խոսքը մեծահասակներին հասցնելու եական լծակ է: Այս ըմբռնումով է թելադրված այն ծրագիրը, որը ՅՈՒՆԻՍԵՖ-ի օժանդակությամբ իրագործվում է Կանանց համահայկական միություն ՉԿ-ի կողմից:

Ծրագիրը շարունակում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի Իսպանիայի ազգային կոմիտեի եւ PAU Educacion-ի համաշխարհային փորձնական նախաձեռնությունը, որի նպատակն է արվեստի եւ գրական ստեղծագործությունների միջոցով հարստացնել երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ) վերաբերյալ գործնական գիտելիքները: 1999թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ն աջակցեց նախաձեռնության ներդրմանը Հայաստանում խթանելով Երեւանի դպրոցներից մեկում կոնվենցիայի դրույթները լուսաբանող գրքի տպագրության պատրաստելու գործը:



տերնետի միջոցով (URL <http://www.educared.net/unicef>): Այսպիսով համագործակցային այս եզակի ծրագիրը թույլ կտա ստեղծել մի ցանց, որը կարող է հաջողությամբ նպաստել ՅՈՒՆԻՍԵՖ-ի ջանքերին՝ խթանելու համայն աշխարհում երեխաների իրավունքների պաշտպանությունը:

Ծրագրի համակարգող Նատալյա Մարտիրոսյան, Կանանց համահայկական միություն.

- Մասնակիցների ընտրության փուլում երեխաները կատարեցին «Նավը» կոչվող խաղը: Պատկերացրեք մի նավ, որի անձնակազմը բաղկացած է միմյայն երեխաներից, առանց մեծահասակների, եւ որը նավարկում է դեպի մի «երազային երկիր»: Խաղն ամբողջությամբ մտահղացել են երեխաները՝ ուր են նավարկելու, եւ ինչպիսին պետք է լինի իդեալական երկիրը:

Այս նպատակակետի ճանապարհին նրանք հանդիպեցին թե՛ դժվարությունների, թե՛ վտանգների, թե՛ հաճելի անակնկալների: Ահա իրադրություններից մեկը. ծովի խորքից դուրս լողաց մի վիշապ եւ պահանջեց, որ նրանք զոհաբերեն անձնակազմի լավագույններից լավագույն անդամին, ամենախելացիին եւ զեղեցիկին, այլապես երբեք տեղ չեն հասնի: Նավապետն առաջարկեց, որ թիմն իրեն հանձնի վիշապին եւ փրկվի, սակայն մյուսներն առարկեցին. «Ո՛չ, դու չես ուզում մենք, եթե դու զոհաբերվես, մենք կկորցնենք մեր առաջնորդին, բացի դրանից, ինչու՞ մտադեպ ստեղծել: Եթե այս անգամ զիջենք, ապա դա կպատահի կրկին ու կրկին: Եկեք կռվենք եւ հաղթենք»: Հոյակապ էր:

Այս տարի նախաձեռնությունը վերածվեց լիարժեք նախագծի: Հայաստանի բոլոր մարզերը ներկայացնող 10-12 տարեկան 44 երեխաներից բաղկացած խումբը հանգրվանեց Հանքավանի ամառային ճամբարներից մեկում, որտեղ պատանիների կողմից ինտերակտիվ մեթոդով անցկացվող գործնական պարապմունքների ժամանակ նրանք յուրաքանչյուրն ԵԻԿ-ը եւ խմբերով մասնակցեցին գրքի պատրաստման աշխատանքին: Պայմանավորված միջոցների առկայությամբ՝ գիրքը կիրառարակվի հոկտեմբերին, Իսպանիայում, PAU Educacion-ի կողմից, նախաձեռնությանը միացած այլ երկրներում երեխաների պատրաստած գրքերի հետ միասին եւ կտարածվի Ին-

Երեխաների հեղինակած գրքի գլխավոր հերոսը Ծաղկավոր իշուկն է: Ուզու՞մ եք իմանալ, թե ով է նա եւ ինչ պատահեց նրան: Կարդացեք գիրքը, որը լույս կտեսնի 2000թ. աշնանը:

ԵՐԵՒԱՆԵՐԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խնամքի համար նախատեսված հաստատությունների փոխարինումը այլընտրանքային ձևերով 90-ականների կեսերին թե՛ քննարկումների նյութ դարձավ Կենտրոնական եւ Արեւելյան Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների մեծ մասում, որտեղ տեղի էր ունենում անցումը շուկայական հարաբերությունների: Հայաստանը բացառություն չկազմեց, եւ խորհրդային կարգերից ժառանգած խնամքի, կրթության եւ վերականգնման հաստատությունների կազմալուծման գորակցում եւ համայնքների վրա հիմնված այլընտրանքներին զարկ տալը շուտով գերակայություն ձեռք բերեցին հանուն երկրի երեխաների բարօրության:

Գիշերօթիկ խնամքի հանձնված երեխաների իրական կենսապայմանները եւ տրամադրվող ծառայությունները, ինչպես նաեւ համայնքների վրա հիմնված խնամքի, կրթության եւ վերականգնման այլընտրանքների միջոցները եւ կարողությունները գնահատելու նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ը միջազգային խորհրդատուի օգնությամբ անցկացրեց հաստատություններում տեղավորված երեխաների եւ առկա միջոցների վերլուծություն: Գնահատման ընթացքում տեսանելի դարձան հաստատություններում առկա թերությունների որոշ խորքային պատճառներ եւ ինստիտուցիոնալ թաքնված միջոցների եւ փոփոխությունների հնարավոր ելակետեր:

Ձեկուցագրի արդյունքները ցույց են տալիս, որ ներկայում երեխաների գոյատեւման, զարգացման եւ պաշտպանության իրավունքները հաստատությունների մեծ մասում ենթակա են լուրջ ռիսկի: Երեխաների ֆիզիկական բարօրությունն առանձնապես լուրջ սպառնալիքի տակ է սնդի, բժշկական պիտույքների եւ սպասարկման պակասի, հագուստով ու կոշիկով ապահովման մշտական թերացումների, ինչպես նաեւ շատ շենքերի, ջրի, կոյուղու, էլեկտրականության եւ ջեռուցման համակարգերի շարունակական քայքայման պատճառով: Ինչ վերաբերում է երեխաների զարգացման իրավունքներին, նրանց կրթության իրավունքը հիմնականում ապահովվում է բավականաչափ որակյալ ու փորձառու աշխատողներով եւ ընդհանուր ու հատուկ կրթության ամուր համակարգով: Այնուամենայնիվ, հատուկ կրթության համակարգում ուսուցիչները հիմնվում են հնացած եւ անհամարժեք դասագրքերի վրա, վերջին տասը տարում չեն մասնակցել ուսուցման եւ գիտելիքների ու հմտությունների նորացման դասընթացների: Երեխաների կրթության իրավունքը ուսնահարվում է շատ դեպքերում, երբ սոցիալապես անապահով, զարգացման առումով անուշադրության մատնված, սակայն իրականում կարող երեխաները հնարավորություն են ստանում մասնակցելու միայն մտավոր անկարող երեխաների համար նախատեսված հատուկ կրթության դասընթացին: Երեխաների խաղի, ազատ ժամանցի եւ հանգստի իրավունքին հաճախ խոչընդոտում է աշխատակազմի իրազեկության բացակայությունը եւ առհասարակ հնարավորությունների ու նյութական ապահովության պակասը: Նրանց հոգեբանական եւ սոցիալական վերականգնման կարիքները բոլորի կողմից չէ, որ ընդունվում են: Որոշ դեպքերում իրազեկության բացակայությունն ակնհայտ էր: Մյուս կողմից՝ մեծ թվով մասնագիտացված հաստատություններ գիտակցել են առավել մասնագի-




Սեւանի հոգեբու ժայռամ
Լուսանկարը գերման Ալլազայան/Յուլիանեֆի

տացված աշխատակազմերի (հոգեբաններ եւ սոցիալական աշխատողներ) կարիքը՝ արձագանքելու համար երեխաների կարիքներին եւ թեթևացնելու նրանց հուզական վիատությունը:

Ընդհանուր առմամբ իրադրության վերլուծությունն ի հայտ է բերում, որ առայժմ գիշերօթիկ հաստատությունների համակարգն ըստ էության բազմաթիվ կարիքավոր երեխաների ընձեռում է գոյատեւման, զարգացման եւ վերականգնման կարիքների բավարարման միակ հնարավորությունը: Բոլոր կարիքավոր երեխաներին ընդգրկելու մտադրությամբ առաջարկվել է Հայաստանի ներկա տնտեսական եւ սոցիալական համատեքստում միջամտությունները նպատակաուղղել հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խնամքի համար նախատեսված հաստատություններից դեպի համայնքների վրա հիմնված ծառայություններ կատարվող աստիճանական անցման խթանմանը: Այս նպատակին հասնելու համար ոլորտի բոլոր գլխավոր գործիչները, այդ թվում՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ը եւ կառավարությունը՝ ազգային եւ մարզային մակարդակներում, գիշերօթիկ հաստատությունների եւ համայնքների վրա հիմնված նախագծերի ներկայացուցիչները, փորձագիտություն տրամադրող անձինք եւ կազմակերպությունները, ինչպես նաեւ նշված խնդրով մտահոգված ՀԿ-ները մշակել են **միջամտությունների եռամ-յա պլան**: ՅՈՒՆԻՍԵՖ-ը Հայաստանի կառավարությանը կաջակցի ֆինանսական եւ փորձագիտական օժանդակության կազմակերպման գործում:

Մանկական հաստատությունները խնամքի այլընտրանքային ձևերով փոխարինելու եւ հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների վիճակի վերաբերյալ ընթացիկ նորություններին տեղեկանալու համար ամեն հինգշաբթի ժամը 16:30-ին Հայաստանի ազգային ռադիոյով եւ FM 107,6-ով ունկնդրեք «Մերունը» ստուդիայի հաղորդաշարը մանկական անկարողունակության թեմայով:



ԱՅԿ-Ն ԱԶԱԿՑՈՒՄ Ե ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐԻՆ

Դեռևս 1994 թվականից Առողջապահության համաշխարհային կազմակերպության եվրոպական գրասենյակի ԱՊՀ երկրների հատուկ նախագիծը սերտ համագործակցություն է սկսել Հայաստանի դեղագործական բնագավառի հետ: Ամփոփական գործընկեր-շարժիչ ուժ է հանդիսանում **Դեղորայքի եւ բժշկական տեխնոլոգիաների հայկական գործակալությունը**: Միացյալ Թագավորության Know How Fund (ԿՀՖ) հիմնադրամը աջակցում է Հայաստանում այդ նախագծի իրականացմանը:

1992թ. առաջին անգամ ԱՀԿ Հիմնական դեղերի մոդելային ցանկի հիման վրա ստեղծվեց **Հայկական հիմնական դեղերի ցանկը** (այն ամեն տարի վերանայվում է): Հիմնական դեղերի հայեցակարգը սկիզբ դրեց դեղորայքի գրանցման գործընթացին, որը կարևոր միջոց է դեղերի հարաճուն շուկայում դրանց որակը երաշխավորելու համար:

1994թ. մշակվեց ազգային դեղորայքային քաղաքականության փաստաթուղթը:

Աջակցություն ցուցաբերվեց նաև դեղորայքի տեղեկատվական համակարգի ձևավորմանը՝ սկզբում նպաստելով «Դեղեր եւ բժշկություն» եռամսյա լրատուի հրատարակությանը, իսկ 1997թ. «Հայկական ազգային դեղամատյանի» հրատարակությանն ու հայ բժիշկների շրջանում տարածմանը, որը հիմնական դեղերի վերաբերյալ առաջին հեղինակավոր հայերեն ձեռնարկն է:

Հայաստանը մասնակցում է միջպետական երկամյա նախագծին, որը նույնպես ֆինանսավորվում է ԿՀՖ-ի կողմից (€250,000) եւ ընդգրկում է դեղագործակալությունների ցանց (DRUGNET), դեղորայքի ռացիոնալ օգտագործման եւ բուժման վերաբերյալ գիտելիքների եւ տեղեկատվության փոխանակում, ինչպես նաև հիմնական հետազոտություն բնակչության անալիզի խավերի համար դեղորայքի մատչելիության վերաբերյալ: Միջպետական միջոցառումներն ընդգրկում են բնագավառի զարգացման վերաբերյալ տարեկան հրապարակումներ եւ ինտերնետային էջի տրամադրում, որը տեղեկություններ է պարունակում ԱՊՀ երկրների դեղագործական բարեփոխումների մասին:

Սկսած 1996 թվականից ԱՀԿ-Հայաստան համագործակցությունն ընդունեց նոր ուղղություն՝ **դեղերի նշանակման բարելավված գործունեություն**, որն ընդգրկում է.

- Ծախսաձեռնարկի տեսակետից արդյունավետ կառավարման համակարգի ստեղծում մի շարք հիվանդանոցներում (դեղորայքի եւ քերպետիկ հանձնաժողովների ստեղծում), մատակարարման լավագույն մեթոդներ, դեղերի ճիշտ ընտրության եւ ռացիոնալ օգտագործման միջոցով բարելավված նշանակում:

- Դեղաբուժության օպտիմալ սխեմաներ: Ներկայումս ավելի քան 40 հիվանդությունների բուժման հանձնարարականներ են մշակվել եւ հաստատվել առողջապահության նախարարության կողմից: Առաջին 7 հանձնարարականները հրատարակվել են առանձին գրքույկով եւ բաժանվել 3 հազար բժիշկների:

1998-99թթ. մի շարք սեմինարներ անցկացվեցին Երեւանում եւ 4 մարզերում դեղորայքի ռացիոնալ օգտագործման, բուժման հանձնարարականների կատարման եւ պատշաճ դեղատեսակի գործունեության թեմաներով: Սեմինարները հետաքրքրությամբ ընդունվեցին ավելի քան 500 կլինիկական բժիշկների եւ 200 դեղագետների կողմից:

Պրոբլեմային ֆարմակոթերապիայի դասընթացը ներդրվեց բժշկական ուսումնական հաստատությունների ծրագրերում:

ԱՀԿ-ն համագործակցում է հայ փորձագետների հետ գիտելիքների ձեռքբերման, արդյունավետ կիրառման եւ տարածման հարցերում: Դեղագործակալության որակի վերահսկման լաբորատորիան Գրղզստանի լաբորատորիայի անձնակազմի համար Երեւանում կազմակերպեց երկշաբաթյա վերապատրաստման դասընթաց **«Անալիտիկ տեխնիկա»** թեմայով եւ մեկշաբաթյա դասընթաց վերահսկման կարգի վերաբերյալ Բիշկեկում: Նույնպիսի պրոբլեմային ֆարմակոթերապիայի վերապատրաստման դասընթաց էր անցկացվել Գրղզստանի բժշկական համալսարանի դասախոսների համար (1998թ. ապրիլ), իսկ 1998թ. Տաշքենդում ԱՊՀ մասնագետների վերապատրաստման մասն դասընթաց անցկացնելու համար պատրաստվել էին ուսումնական նյութեր: 2000թ. մարտին 9-ը փորձագետներ Գրղզստանից Երեւանում անցան ուսումնական դասընթաց դեղորայքի արդյունավետ կանոնակարգման թեմայով:

«Դեղերի մասին» օրենքն ընդունվեց Ազգային ժողովի կողմից (1998թ. հոկտեմբեր):

2000թ. ընթացքում ԱՀԿ-Հայաստան համագործակցությունը համահունչ է մնում երկամյա ծրագրի (սկսած 1999թ. մարտից) նպատակներին՝ շեշտը դնելով մատչելիության խնդրի վրա: Հիվանդանոցային դեղորայքի կառավարման բաղադրիչը շարունակում է ընթանալ Երեւանի 5 հիվանդանոցներում, իսկ Դեղերի փոխհատուցման ծրագիրը սկսել է փորձականորեն իրականացվել Կոտայքի մարզում:

ԱՀԿ աջակցությամբ 1993 թվականից առաջաօր հայ փորձագետները ավելի քան 25 արտասահմանյան երկրներում մասնակցել են 90 տարբեր խորհրդակցությունների, գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների եւ ուսումնական գործուղումների:

ԱՅԿ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե ԱԶԱԿՑԵԼ ԻՄՈՒՆԻԶԱՑԻԱՅԻ ԾՐԱԳՐԻՆ

- 2000թ. մայիսի 8-11-ը ԱՀԿ-Կենտրոնական գրասենյակի առաքելությունը՝ բժիշկներ Ն.Գեյլեյայանեյի, Լ.Չոկաբոյի եւ Գ.Լարսենի մասնակցությամբ, մանրակրկիտ ուսումնասիրեց իմունիզացիայի ծրագրի պատվաստուկների առաքման, մաքսագործման, պահպանման եւ բաշխման համակարգի հարցերը եւ վեր հանեց այն գործոնները, որոնք յուրաքանչյուր փուլում կարող են ազդել պատվաստուկների որակի վրա:
- 2000թ. հունիսի 2-ից հուլիսի 12-ը ԱՀԿ փորձագետ Ս. Պոպովան աջակցություն ցուցաբերեց Ազգային իմունիզացիայի ծրագրին հնգամյա պլան եւ կարմրուկ-խոզուկ-կարմրախտ պատվաստուկի կիրառման ռազմավարություն մշակելու գործում:



Լուսանկարը՝ Մ.Մատա Լամգուայի

Պարենի ու գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) եւ Համաշխարհային պարենի ծրագրի (ՀՊԾ) համատեղ առաքելությունը, որ Հայաստանում աշխատեց այս տարվա մայիսի 14-21-ը, եզրակացրեց, որ 2000թ. բերքը կարող է անցյալ տարվա համեմատ ավելի բարձր լինել, եւ հացահատիկի ու ընդեղենի 320 հազար տոննա բերքի կանխագուշակումը հիմնավոր է: Սակայն առաքելության հաշվետվության հեղինակներն իրավացի էին նշելով, որ 2000թ. գյուղատնտեսական արտադրանքի եւ մասնավորապես հացահատիկի բերքի չափերն անորոշ են մնում, քանի որ տեղումների քանակը ամենակարեւոր՝ մայիս-օգոստոս ամիսներին անբավարար էր, եւ բավարար բերք ստանալու համար բավականաչափ ոռոգում է անհրաժեշտ: Այս հատուկ հաշվետվությունը կարող եք կարդալ ՊԳԿ-ի ինտերնետի հետեւյալ հասցեով՝

<http://www.fao.org/giews/>

Հայաստանի գյուղատնտեսական հատվածը հայտ-

ՄՆՈՒՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՍԱՅ ԾՐԱԳՐԻ ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս տարի Սնունդ աշխատանքի դիմաց ծրագրին հատկացվող սննդի քանակը համարյա կրկնապատկվել է, իսկ ՍԱԴ-ի մասնակիցների թիվը անցյալ տարվա 40 հազարից կաճի մինչեւ 60 հազարի: ՀՊԾ-ն աստիճանաբար նվազեցնում է անվճար օգնության քանակը՝ դրա տրամադրումը նախատեսելով միայն նրանց համար, ովքեր չեն կարող գործունե կերպով մասնակցել ՍԱԴ-ի աշխատանքներին:

ՀՊԾ-ն վերսկսել է իր կորդինացման ժողովները՝ առանձնապես շեշտը դնելով Սնունդ աշխատանքի դիմաց ծրագրի վրա: Առաջին այդպիսի ժողովը գումարվեց հունիսի 20-ին, որին մասնակցեցին զգալի թվով միջազգային ու ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նախանշվեցին համագործակցության ուղիներ, որոնք առանձնապես օգտակար են առավել կարիքավոր համայնքների համար եւ բացի աշխատուժից՝ չունեն ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ միջոցներ:


ՀՊԾ-ն բոլոր մարզերին պարբերաբար տեղեկություններ է ուղարկում ՍԱԴ-ի ծրագրերի ու ծրագրերի առաջարկների մասին՝ նպատակ ունենալով ապահովել տեղեկատվության թափանցիկությունը եւ բոլոր կողմերի համար ծրագրի հավասար մատչելիությունը:

Կարիքավոր համայնքներում ծրագրերի արդյունավետությանը նպաստելու նպատակով ՀՊԾ-ն տրամադ-

ՊԳԿ-ՀՊԾ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԵՐԱՇՏԸ

նրվել է բացառիկ դժվարին կացության մեջ: Հունիսի երկրորդ կեսից պահպանվող օդի բարձր ջերմաստիճանն ու տեղումների աննշան քանակը հանգեցրել են երաշտի ու սակավաջրության: Ըստ կառավարության, բերքի կորուստները կկազմեն ավելի քան 40 միլիոն ԱՄՆ դոլար:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը հրապարակել է հաշվետվություն շարունակվող երաշտի, սակավաջրության հետեւանքների ու դրանց վերացման միջոցառումների վերաբերյալ: Միաժամանակ նախարարությունը օժանդակության համար դիմել է ՊԳԿ-ի ու ՀՊԾ-ի՝ հռոմուն տեղակայված կենտրոնական գրասենյակներին: Իր դիտորդների մարզեր կատարած այցելություններով, համապատասխան կազմակերպությունների ու մարդկանց հետ հանդիպումներով ՀՊԾ-ն հետեւել ու շարունակում է հետեւել իրավիճակի զարգացմանն ու արդեն ի հայտ եկող հետեւանքներին: Մասնավորապես ամենից շատ տուժած մարզերից Շիրակում արդեն **ա)** հավաքված ցորենի բերքը 5 հեկտարից կազմում է 1 տոննայից պակաս, այնինչ սովորաբար եղել է հեկտարից 2-3 տոննա. **բ)** մսավաճառները պատրաստ են գյուղացիներից անասուն գնել սովորական գնի 50 տոկոսի վճարումով. **գ)** նպարավաճառները կաթը գյուղացիներից սկսել են գնել նախկին 1 լիտրը 80 դրամի փոխարեն 50-60 դրամով:



Լուսանկարը՝ Մ.Մատա Լամգուայի

րում է նաեւ ոչ պարենային (ՈՊ) ապրանքներ: Միաժամանակ ՀՊԾ-ն եռանդուն կերպով որոնում է գործընկերներ, որոնք ՍԱԴ-ի ծրագրերում ՈՊ ներդրումներ կանեն: ՀՊԾ-ի այսմյան գործընկերներն են ԳԹԶ-ն, Հայկական կարիտասը, Հայկական կարմիր խաչը, ԱՄՔՈՐ-ը եւ ՄԱԿ-ի Փախստականների գծով գերագույն հանձնակատարի (ՓԳՀ) գրասենյակը: ՀՊԾ-ն ու ՓԳՀ-ն ստորագրել են ՈՊ-ի վերաբերյալ համաձայնագիր, որով վերջինս ՀՊԾ-ին նվիրաբերում է 50 հազար ԱՄՆ դոլար:

2000թ. առաջին կեսին ՀՊԾ-ն առաքել է 12 810 տոննա պարեն, որով ստեղծվել է 3 618 000 մարդ/օր, գրանցել է գրասենյակ հանձնված 839 ծրագրի առաջարկ, որից հաստատել է 420-ը:



ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՍ ՆՇՎՈՒՄ Ե ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Այս տարվա օգոստոսի 12-ին առաջին անգամ նշվեց **Երիտասարդության միջազգային օրը**: Այդ գաղափարը մտահղացել են հենց երիտասարդները Միավորված ազգերի համակարգի Երիտասարդության առաջին համաշխարհային ֆորումի ժամանակ, որը կայացել է 1991թ. մայիսի 27-29-ը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում: Ֆորումի մասնակիցները առաջարկեցին երիտասարդության միջազգային օր հռչակել մամավանդ համաձայնության եւ առաջընթացը խթանելու նպատակով, որպեսզի, համագործակցելով երիտասարդական այլ կազմակերպությունների հետ, աջակցեն Միավորված ազգերի երիտասարդության հիմնադրամին:

Միավորված ազգերի կազմակերպությունում ընդունված է երիտասարդների խմբի մեջ դասել 15-ից 24 տարեկաններին, որոնք այսօր կազմում են ողջ աշխարհի բնակչության մեկ վեցերորդը: Նրանց մեծ մասը ապրում է զարգացող պետություններում, եւ սպասվում է, որ նրանց թվի աճը կշարունակվի նաեւ XXI դարում:

Հետագայում երիտասարդության հարցերով նախարարների համաշխարհային համաժողովի առաջին նստաշրջանը, որը հյուրընկալել էր Պորտուգալիայի կառավարությունը Միավորված ազգերի լիաբունյան գրասենյակի հետ համատեղ, ընդունեց բանաձեւ, որով **օգոստոսի 12-ը հռչակվեց Երիտասարդության համաշխարհային օր**: Գլխավոր ասամբլեան, իր 54-րդ նստաշրջանում 1999թ. դեկտեմբերի 17-ին ընդունելով **«Երիտասարդներին առնչվող քաղաքականություն եւ ծրագրեր» A/RES/54/120** բանաձեւը, վավերացրեց Երիտասարդության հարցերով նախարարների համաշխարհային համաժողովի հանձնարարական օգոստոսի 12-ը Երիտասարդության միջազգային օր հռչակելու մասին:

Գլխավոր ասամբլեան միաժամանակ հանձնարարեց ծավալել հրապարակային տեղեկատվական գործունեություն բոլոր մակարդակներում եւ մասնավորապես երիտասարդությանը

տեղեկացնելու համար երիտասարդների գործողությունների համաշխարհային ծրագրի մասին, որի նախաբանում ասվում է. «Երիտասարդները խոշոր սոցիալական փոփոխությունների գործակալներն են, շահառուները եւ տուժողները: Նրանք միաժամանակ դեմ են առնում մի անելանելի վիճակի, երբ կա՛մ պետք է ինտեգրացվեն առկա հասարակարգում, կա՛մ գործեն որպես վերափոխիչ ուժ: Աշխարհի բոլոր անկյուններում, զարգացման տարբեր աստիճան ունեցող երկրներում եւ սոցիալ-տնտեսական տարբեր միջավայրերում երիտասարդությունը ձգտում է լիարժեք դեր խաղալ հասարակության կյանքում»:

Այս առաջին անգամ նշվող երիտասարդության միջազգային օրը ուշադրություն պետք է սեւեռել Գործողությունների համաշխարհային ծրագրի վրա. ինչպես այն կարելի է լավագույնս իրականացնել երիտասարդների համար, երիտասարդների միջոցով եւ երիտասարդների հետ: Պետք է գիտակցել նաեւ, որ երիտասարդները չեն կարող լռելյայն համակերպվել իրենց կյանք ներխուժած գլոբալիզացիայի ազդեցությանը: Ամիրաժեշտ են նոր համագործակցություններ բոլոր մակարդակներով, թե՛ երիտասարդների, թե՛ երիտասարդների եւ կառավարության, եւ թե՛ երիտասարդների ու Միավորված ազգերի միջեւ: Երիտասարդության միջազգային օրը հնարավորություն է ընձեռում վերագնահատելու եւ սերտացնելու այդ համագործակցությունը, ինչպես որ Գլխավոր քարտուղարն է երիտասարդության միջազգային օրվան նվիրված իր ուղերձում կոչ անում. «Եկեք հաստատուն դարձնենք երիտասարդների հետ համագործակցությունը բոլոր ասպարեզներում»:


Երիտասարդները հասկացել են՝ որպեսզի գլոբալիզացիայի ազդեցությունն իրենց կյանքում դրական ու արդյունավետ լինի, պետք է այսօրվանից աշխատեն ապագայի համար եւ չսպասեն բարձր առյուծների որոշումներին: Պետական մակարդակում պրն Զոֆի Անանը հորդորում է այն կառավարություններին, որոնք մինչ օրս այդպես չեն վարվել, կանոնակարգեն եւ ընդունեն երիտասարդներին վերաբերող ամբողջական ազգային քաղաքականություն աջակցելով երիտասարդների հետ համագործակցող մարմնի ստեղծմանը, որպեսզի երիտասարդներին վերաբերող քաղաքականությունն իրականանա հենց երիտասարդների միջոցով:

<http://www.undpi.am/releases>



ՄԱՀՄԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄՄԿ-ն, համագործակցելով ՀՀ ազգային անվտանգության, ներքին գործերի եւ արտաքին գործերի նախարարությունների հետ, կազմակերպել էր Հայաստանի վիզային ռեժիմի եւ մուտքի-ելքի գործընթացների փորձագիտական գնահատում նպատակ ունենալով ներկայացնել օրինական եղանակներով ճանապարհորդության դյուրացման եւ անօրինական միգրացիայի կանխարգելման առաջարկներ: Գնահատող խումբն այցելել է «Ձվարթնոց» օդանավակայան եւ Սեդրիի ու Բագրատաշենի սահմանակետեր, նաեւ հանդիպել է կառավարության համապատասխան նախարարությունների եւ վարչությունների պաշտոնյաներին, ավիաուղիների, դեսպանատների եւ այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին: Սեպտեմբերին զեկույցը կներկայացվի ՀՀ կառավարությանը, եւ ՄՄԿ-ն կաջակցի հանձնարարականներն իրականացնելիս:



■ Arriving persons
■ Departing persons
■ Dep. in excess of arr.

ԱՊՅ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1996թ. ՄԱԿ-ի ՓԳՀ-ն, ՄՄԿ-ն եւ ԵԱՀԿ-ն գումարել էին համաժողով՝ ԱՊՅ-ում եւ հարակից երկրներում հարկադրված տեղաշարժվածների ու փախստականների հիմնախնդիրների կարգավորման նպատակով: Համաժողովին մասնակցում էին ԱՊՅ երկրների կառավարությունների, միջազգային եւ հասարակական կազմակերպությունների բարձրաստիճան պաշտոնյաներ: Արդյունքում պատրաստվեց հնգամյա ժամանակահատվածի համար նախատեսված Գործունեության ծրագիր, որտեղ նշվում են Խորհրդային Միության փլուզումից հետո ծագած տարաբնույթ եւ բարդ միգրացիոն խնդիրների կարգավորման ուղիները եւ շրջանակները: ԱՊՅ համաժողովի Գործունեության ծրագրում միջազգային կազմակերպություններն ու կառավարություններն ընդգծել են բնակչության տեղաշարժի եւ դրան առնչվող հիմնախնդիրների համար երկարաժամկետ լուծումներ գտնելու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ ընդունել են ազգային ՀԿ-ների կարեւոր դերն այդ ոլորտի աշխատանքներում:

2000թ. հուլիսին ժնեւում տեղի է ունեցել ԱՊՅ համաժողովի համակարգող խմբի հինգերորդ եւ վերջին հանդիպումը: ՄՄԿ-ն զեկույցով հանդես է եկել թե՛ համակարգող խմբի, եւ թե՛ դրան նախորդած հասարակական կազմակերպությունների հանդիպմանը: ՄՄԿ-ի Գլխավոր տնօրեն Բրանսոն ՄքՔինլին նախագահում էր համակարգող խմբի վերջին օրվա հանդիպմանը, որի ընթացքում ընդունվեց, որ համաժողովի գործընթացը զգալի առաջընթաց է արձանագրել Գործունեության ծրագրում վեր հանված մի շարք հարցերի առումներով եւ ապահովել է կարեւոր նպատակների իրականացումը: Նշվեց նաեւ, որ դեռ բավականին անելիքներ կան: Վերանայված գործընթացի հետագա զարգացումը կտարվի չորս թեմատիկ ուղղություններով, փորձագիտական աշխատանքային խմբերի միջոցով, եւ յուրաքանչյուրին կօժանդակի մեկ ղեկավար կազմակերպություն:

Այդ թեմաներն են. խնդրո առարկա խմբերին շարունակական ուշադրության հատկացումը, միգրացիոն կառավարումը, հասարակական կազմակերպությունների սեկտորի ու քաղաքացիական հասարակության ձեռքբերումների պահպանումը եւ օրենսդրության կիրարկումը:

ԱՆԳԼԵՐԵՆ

ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄՄԿ-ի կազմակերպած եւ սկսնակների համար նախատեսված անգլերեն լեզվի 12 շաբաթ տեւողությամբ դասընթացին մասնակցած 12 անձինք Երեւանի «Զվարթնոց» եւ «Էրեբունի» օդանավակայաններում աշխատող սահմանապահներ էին, նաեւ անձնագրերի եւ վիզաների վարչության, արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության ներկայացուցիչներ: ՄՄԿ-ի կողմից մշակված ուսումնական ծրագիրն ուղղված էր սահմաններում աշխատող անձնակազմի գործառնական խնդիրների բավարարմանը: Ուսուցումը իրականացվել է անգլիստի մասնագետի կողմից, որը մեծ փորձ ունի անգլերենը որպես օտար լեզու դասավանդելու ոլորտում:

ՓՈԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

ԻՆՔՆԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՈՒՄ

Ի նշան 1999թ. հաջող համագործակցության շարունակության՝ ՄՄԿ-ի կողմից իրականացվող փոքր բիզնեսի զարգացման ծրագրի համար ՄԱԿ-ի ՓԳՀ-ի կողմից տրամադրվեց ֆինանսական աջակցություն 2000թ. համար: Նախորդ տարում իրականացված այս ծրագրի արդյունքում ավելի քան 100 ընտանիքներ (մեծ մասամբ փախստականներ) ձեռք բերեցին ինքնուրույն գործ եւ աշխատանք: Ծրագրի շարունակումը հնարավորություն կտա երեւանի եւ Վանաձորի եւս 150 փախստականների եւ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար իրականացնել բիզնեսի կառավարման ուսուցում, խորհրդատվություն եւ ֆինանսավորում:

ՄՄԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ


ՄՄԿ-ի Գլխավոր տնօրեն Բրանսոն ՄքՔինլին ՀՀ կառավարության հրավերով հոկտեմբերի 22-ին մեկ շաբաթով առաջին անգամ կայցելի Հայաստան: Դա հնարավորություն կտա Հայաստանին եւ ՄՄԿ-ին քննարկել համատեղ հետաքրքրություններ կայացնող հարցեր, իսկ Գլխավոր տնօրենը Հայաստանում միգրացիոն հարցերին վերաբերվող անմիջական տեղեկատվություն կստանա:

ԲՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ

Գերմանիայի Դաշնային Հանրապետության կողմից ՄՄԿ-ն նշանակվել է մացիստական ռեժիմի օրոք բռնի աշխատանքի դատապարտվածների պահանջների բավարմամբ եւ փոխհատուցմամբ զբաղվող Դաշնային հիմնադրամի համագործակից կազմակերպություն:

ՄՄԿ-ն կզբաղվի «աշխարհի այլ հատվածների» բնակիչ-պահանջատերերի հայցերի բավարարմամբ: Այդ խմբի մեջ են ոչ հրեա այն տուժածները, ովքեր ապրում են աշխարհի ցանկացած անկյունում՝ բացառությամբ Լեհաստանի, Չեխիայի, եւ նախկին Խորհրդային Միության երկրների: Վերջիններիս կսպասարկեն համագործակցող այլ կազմակերպություններ, ինչպիսիք են Հաշտության հիմնադրամը (Reconciliation Foundation) եւ Հրեաների հայցապահանջների համաժողովը: Հայաստանում բնակվող հայցապահանջատերերի համար համագործակից կազմակերպությունը ոչ թե ՄՄԿ-ն է, այլ այն երկրի համագործակից կազմակերպությունը, որտեղից բռնի աշխատող անձը բռնի տեղափոխվել է: Պատերազմի ռազմագերիները իրավասու չեն դիմել փոխհատուցման համար, եթե չեն տեղափոխվել համակենտրոնացման ճամբար եւ հարկադիր աշխատանքի:

UN WORKS... UN WORKS... UN WORKS... UN WORKS...



UN WORKS... UN WORKS... UN WORKS...

«ՄԱԿ-ն ԱՇԽԱՏՈՒՄ Է...»-ն ՀՏԲ-ի նոր գլոբալ քարտզարչավն է: Դրա նպատակն է ներմուծել «ՄԱԿ-ն աշխատում է» ուղերձը կամ թեման հանրային տեղեկատվության բոլոր արտադրանքներում, միջոցառումներում եւ ծրագրերում:



Մեր հասցեն. ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ,
Կարլ Լիբկնեխտի 14, Երևան, 375010



UNDP:
Հեռ. 52-93-41/58-31-94/151-453
registry@undp.am



UNFPA:
Հեռ. 56-03-40/56-60-73
karend@unfpa.am



UNDPI:
Հեռ. 56-02-12/151-647
dpi@undp.am



WFP:
Հեռ. 58-05-38/56-49-04/151-572
wfp@arminco.com



UNICEF:
Հեռ. 58-01-74/58-05-16/151-698
unicef@arminco.com



WHO:
Հեռ. 56-43-67/56-53-24
who@ix2.yerphy.am



UNHCR:
Հեռ. 56-47-71/58-48-92/151-451
unhcr@arminco.com



IOM:
Հեռ. 58-56-92/151-793
iom@arminco.com



UNESCO-ի գործերով ազգային համընթացողով
ԱԳՆ, Կառ. շենք 2, Երևան, 375010
Հեռ. 56-69-11; vasaturian@mfa.am

Համարում օգտագործվել են

ՄԱԿ-ի համակարգում գործող կազմակերպություններից եւ ՀՏԲ-ից ստացված նյութերը

Սեկնաբանությունների կամ լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՏԲ-ի Երեւանյան գրասենյակ
Տես նաեւ ՀՏԲ վեբ կայքը՝ <http://www.undpi.am> կամ <http://www.undpi-mirror.am>